

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՍՏԿՈՒՄ.

Ակադեմիկ Վ. Բեհսերենի \*

8.

Եթէ մտաւոր զարգացման համար ըմբռնող գործարանների և շարժող շրջանների կրթութիւնը այսքան էական տեղ է զրաւում, սակայն անձնաւորութիւնն—որպէս սօցիալական միութեան զարգացման համար առանձին նշանակութիւն ունի այսպէս կոչւած հոգեկան զգացմունքների կրթութիւնը, ուրիշ խօսքով ասած հոգու յուղական կողմերը: Յոյզերը իրենց օրգանիզմի վրայ թողած աղղեցութեան տեսակէտից կարող են լինել՝ առոյզացնող և թարմացնող կամ թուլացնող և ճնշող, իսկ ուրիշ մարդոց վրայ աղղելու տեսակէտից նոքա բաժանուում են՝ հասարակական կամ բարոյական և հականասարակական կամ եսական: Վերջապէս բոլորովին տարբեր կարգ են կազմում գեղարուեսաւական և կրօնական յոյզերը: Ցանկանալով վերջին երկու յոյզերի մասին առանձին խօսել, մենք ամենից առաջ իրեւ հիմք դնում ենք, որ յուղական կողմի կրթութեան հիմնական հարցը պէտք է լինի՝ որքան կարելի է, երեխային վարժեցնել օգտակար-առօյզացնող յոյզերի և ընդհակառակը՝ ճնարաւորին չափ հետացնել ըուլոր ճնշող յոյզերը: Ահա այս է մանկական հասակի դաստիարակութեան յետազայ հիմնաւոր սկզբունքը:

Պէտք է ի նկատի ունենալ, որ հիմնական յոյզերի սաղմը արդէն երևում է երեխայի կեանքի առաջին օրերից, ուրեմն և յոյզերի կրթութիւնը պէտք է սկսել ծննդեան օրից: Հէնց առաջին օրից սկսած օրգանիզմի կուշտ և բարեյաջող պահպանութեան ժամանակ նորածինը ցոյց է տալիս խաղաղ թարմութիւն և ընդհակառակը—քաղցի, թացութեան և ցրտի ժամանակ՝ անհանգստութիւն, պաշտպանողական բնոյթ ունեցող շարժումներ, որոնք փոխուում են սուր ճիշի: Ապա կարճ ժամանակից յետոյ երեխային լաւ

ինսամելու դէպքում դժուար չի լինի նրա դէմքին ժպիտ նշմառելը, որը կապուած է բոլոր շարժումների կենդանութեան հետ, իսկ ուրիշ պայմաններում—լաց, որը արտայայտում է ոչ միայն ճիշով, այլ և արցունքներով. վերջապէս աւելի ուշ բոլորովին պարզ նկատում է երեխայի բարի և զուարթ դրութիւնը, որը փոխուում է թարմարար ուրախութեան, իսկ միւս կողմից արցունքներով արտայայտող ճնշող դրութիւնը: Այստեղ ամենից առաջ անհրաժեշտ է նկատել, որ ուրախ դրութեամբ արտայայտող առողջացնող յոյզը օրգանիզմի կինսական գործունելութեան համար ընդհանրապէս մեծ նշանակութիւն ունի Նա բարեյաջող աղղեցութիւն է անում նրա բոլոր գործառնութիւնների վրայ՝ ինչպէս աճողականների, նոյնպէս և նեարդահոգեկանի, որոնք կանոնանաւորում են օրգանիզմի արտաքին յարաքերութիւնները:

Ուրախ և բաւարարութիւն ստացած երեխան աւելի լաւ է իւրացնում սնունդը, աւելի առոյգ է, ուժեղ է և աշխատանքի ընդունակ. Նա դէպի խաղերը և զրադմունքները աւելի մեծ հետաքրքրութիւն է յոյց տալիս, բոլոր ինդիբները հեշտութեամբ է ըմբռնում, քան դիւրագրգիս, անբաւական և միշտ լաց լինող երեխան:

Սա այն աստիճանն տարբական ճշմարտութիւն է, որ ևս աւելորդ եմ համարում մանրամասնութիւնների վրայ կանգ առնել: Սակայն ասածներից պարզ երկում է, որ մանկան հագույոյզական կողմի կրթութեան մէջ հոգս պիտի տանել, որքան հսարաւոր է, պահպանել ուրախ և առոյցացնող յոյզերը և հեռացնել ճնշող յոյզերը: Բարեքախտաբար բնականից կանոնաւոր զարգացած և առողջ երեխան հակումն է յոյց տալիս դէպի ուրախաշխոյժացնող յոյզերը: Ծըծի երեխային բաւական է կնոջ կաթի կանոնաւոր մատակարարելը, տեղի չորութիւն, կաշու լաւ և մաքուր ինամելն ու տաքութիւնը, որ նա ուրախ յոյզ յոյց տայս երեխայի յիտագայ զարգացման ժամանակ նրան ուրախացնում է ամեն մի փայլուն իր՝ հասարակ բոժոժներ կամ խաղալիքը, նրան ուրախացնում է յանկարծ սենեհակը թոշող թոշնիկը կամ նոր կինդանու տեսքը և մինչև անգամ ամեն մի տաղաւորութիւն, որը իւր մէջ երեխայի համար անգութեկան բան չի պարունակում: Ես չիմ մոռանայ, թէ ինչպէս նաւակը ծովը իջեցնելու ժամանակ, այդ տեսարանը ուշադրութեամբ դիտող հինգամեայ երեխան, սկսից աւազի վրայ ուրախութեախ մի քանի անգամ զլիսակոնձի տալ, արտայայտելով իւր բաւականութիւնը ուրախութեան բուռն աղաղակներով այն բովէին, երբ նաւակը ջուրը իջեցրին: Վերջապէս առոյցացնողութեախ յոյզ երեխային պատճառում են այլհայլ մատչելի պարապմունքները, յատկապէս զուարճալիք-

Ներն ու խաղերը։ Մօր, դաստիարակչունու կամ մանկավարժի կողմից յանցաւոր քայլ կիխի երեխայի զարգացման օգտակար այդ առողջացնող յոյզը ճնշել, չպահպանել այն և չզարգացնել մինչեւ որքան յաձախ կանգնեցնում են մանուկին, երբ նա ուրախութիւնից զուարթ ծիծաղում և թռչկոտում է, մոռանալով՝ որ առողջացնող յոյզի ճնշումը երեխայի զարգացման էտկան վաս է հասցնում։

Ապենսերը իրաւացի է, ասելով՝ որ կազդուրիչ միջոցներից ուրախութիւնը ամենաուժեղն է։ Արագացնելով արեան շրջանառութիւնը նա թեթևացնում է միւս բոլոր փունկցիաների գործունչութիւնը, ամբապնդում և վերականգնում է նոյն իսկ քայլքայւած առողջութիւնը։ Երեխաների գէպի խաղերն ունեցած չափազանց հետաքրքրութիւնը, անզուսպ ուրախութիւնը նոր զուարծութիւնների զիմելիս այնքան էտկան հն նոցա համար, որքան և սոցա ընթացակցւող շարժումներ։

Դժուար չէ տիսնել, որ ուրախ-առողջացնող յոյզի պահպանաման համար ամենից ասած անհրաժեշտ է երեխայի օրգանիզմի ֆիզիքական բարեկեցութեան մասին եղած լիիւ հոգացողութիւնը, ապա երեխայի կանոնաւոր խաղի, համապատասխան պարապմունքի հնարաւորութիւն ստեղծելը, որոնք գրաւեն նրա ուշադրութիւնը և հետաքրքրեն նրան։

Պակաս չափով էտկան չէ ճնշող յոյզերի հեռացումը, որոնք օրգանիզմի բոլոր գործունէութեան վրայ անբարեյածող ազդեցութիւն են անում։ Ոչ միայն ճիշը և վախից քարանալը վնասակար են երեխայի ֆիզիքական և մտաւոր զարգացման համար, նոյն իսկ մշտական լացը վատ է ազդում ինչպէս մնման, նոյնպէս և նրա հոգեկան զարգացման վրայ, ծատ և յաձախ լացող երեխան չի կարող լաւ և կանոնաւոր բարգաւաճել ուստի և կրթութեան բոլոր ջանքը պէտք է ուղղուած լինի հնարաւոր եղածին չափ հեռացնել այդ անբարեյածող յոյզերի զարգացման սկզբնապատճառները։ Վյու նպաատակին համելու էտկան սկզբունքներն են՝ օրոգանիզմի ֆիզիքական բարեկեցութեան պահպանումը (կանոնաւոր սնունդի քուն, լողացումներ և այլն) մեղ յայտնի բոլոր միջոցներով։ Երեխայի զանազան ձգտումներին բաւարարութիւն տալը և նրանից տմեն մի գայթակղութիւն հեռացնելը, որոնք կարող են ցանկութեան յոյզ առաջացնել և որին բաւարարութիւն տալը դժուար է, որքան կարելի է, ամեն տեսակի անբարեյածող գրգռութիւնները հեռացնել և խուսափել երեխային աւելորդ, թէ ֆիզիքական և թէ հոգեկան յոյնածութիւն պատճառելուց։ Յայտնի է, որ չափազանց զիւրագրգռութիւնը, չզայնութիւնը և սրանց հետ կապուած քմահաճութիւնը պայմանաւորում են մանկան յոյնա-

շան կութեան յոյզ առաջացնել և որին բաւարարութիւն տալը դժուար է, որքան կարելի է, ամեն տեսակի անբարեյածող գրգռութիւնները հեռացնել և խուսափել երեխային աւելորդ, թէ ֆիզիքական և թէ հոգեկան յոյնածութիւն պատճառելուց։ Յայտնի է, որ չափազանց զիւրագրգռութիւնը, չզայնութիւնը և սրանց հետ կապուած քմահաճութիւնը պայմանաւորում են մանկան յոյնա-

ծութեամբ, հէնց այդ իսկ պատճառով միշտ պէտք է խուսափել յոգնածութիւնից, որը մատաղ հասակում շուտ շուտ պատահում է տպաւորութիւնների առատութիւնից:

Եթէ երեխան մի արտաքին հանգամանքի ազգեցութեան տակ է լաց լինում, իսկոյն պէտք է հանգստացնել նրան: Երեխան հեշտութեամբ է հանգստանում, նոյն իսկ հասարակ խոստումով, որը յամենայն դէպս ժամանակի ընթացքում պիտի կատարելու վերջապէս ճնշող յօյզերի հեռացնելու կամ թեթևացնելու գիխաւոր միջոցներից մէկն է ուշագրութեան որ և է բանի վրայ գրաւելը: Եթէ երեխան լալիս է կրած ցաւից, չբաւարարուած ցանկութիւնից կամ վախից, անհրաժեշտ է մի նոր տպաւորութեամբ նրա ուշագրութիւնը գրաւել, օրինակ՝ մի դրադեցնող հէքեաթով (պատմուածքով), որից յետոյ նա շուտով մոռանում է իւր վիշտը և դադարում է լաց լինելուց: Եթէ անընդհատ լացը քմահաճոյքից է առաջացել, ինչպէս այդ լինում է դիւրագրգիռ, ջղային երեխաների հետ, եթէ ոչ խոստումները, ոչ ուշագրութեան որ և է բանով գրաւելը չեն ազդում, օգասակար է երեխային մի առ ժամանակ մենակ թողնել, որովհետև այս դէպքում, մարդկանց չտեսնելով դադարում է քմահաճութիւնից և շուտով հանգստանում է: Սակայն քմահաճութիւնը հիւանդու երևոյթ է, որը կանոնաւոր դաստիարակութեան դէպքում չպէտք է լինէր:

Կարիք չկայ ասելու, որ վախի յօյզը յատկապէս վնաս է երեխայի առողջութեան համար, ուստի պէտք է խուսափել այն ամենից, ինչ որ երեխային վախ է պատճառում: Որքան ծանր, երբեմն նոյն իսկ անբուժելի, ջղային տանջանքներ զարգանում են վախի շնորհիւ մինչդեռ ներկայումս էլ տարածուած են երեխաների հետ այնպիսի զրադմունքներ, որոնք հիմնուած են երեխային վախեցնելու վրայ: Օրինակ՝ յանկարծ երեւում են երեխայի աշքին շորերը փոխած, սպաննալից ձայներ հանելով և այլն: Անօգնական մանուկը արգէն բնութիւնից վախկոտ և ճնշուող արարած է, ուստի հեռացրէք նրանից ամեն մի աւելորդ վախ, ամեն մի աւելորդ ճնշում: Եթէ երեխան սարսափում է կայծակից, հեռացրէք նրա ուշագրութիւնը վախից, բացարեցէք նրան ինչպէս կարող էք, որ կայծակից վախենալու հիմք չկայ և չպէտք է: Եթէ երեխան վախենում և ճնշում է կողմնակի անձնաւորութիւններից, աշխատեցէք սկզբում ուշագրութիւնը հեռացնել նրանցից, իսկ յետոյ համոզեցէք, որ չպէտք է քաշուել բարի հիւրերից: Ընդհանրապէս բոլոր մեզնից կախուած միջոցներով պէտք է յարուցանենք մանկան մէջ առոյցութեան-նոյն իսկ համարձակութեան պացմունքը, միայն կարիք եղած դէպքում բացարելով, ինչպէս և ինչ բաներում պէտք է զգոյշ լինել: Սրա հետ միասին երեխային:

երրէք չպէտք է պատմել սարսափեցնող հէքիաթներ՝ կախարդների, հակաների, զեկերի, արջերի մասին և այլն: Այդպիսի հէքեաթների չնորդիւ մանուկը վաղաժամ սկսում է շատ բաներից սարսափել, անհանգիստ քնել և զարհուրելի երազներ տեսնելու Որքան վաս են հասցրել մատաղ սերնդին այլ և այլ մանկական կոչուած գըրքոյիները իրենց հէքեաթներով, սակայն, դժբախտաբար, մինչեւ այժմ էլ նոքա գործածութեան մէջ են:

Գալով բարոյագիտական յոյզերին, սոցա ևս պէտք է խնամել և զարգացնել իրենց սկզբնաւորութեան առաջին օրերից սկսած, այս կողմը ևս մանկական հասակի դաստիարակութեան էական սկզբունքներից մէկն է: Երեխան ընականից ձգտում է մօտենալ ուրիշ էակների, յատկապէս իւր մասին հոգացող անձնաւորութիւնների հետ, ինքը վաղաքշում նոցա և կարիք է զգում փոխադարձ վաղաքշանքի: Մյու վայփայանքը պէտք է տալ երեխային լրիւ և սրտանց: Նոյն իսկ նորածին երեխան համապատասխան կերպով հականերգործում է վաղաքշանքին և իրենց ցոյց տուած քնքոյց վերաբերմունքին և իւր հերթին վարձահատոյց է լինում վաղաքշոյ հայեացքով կամ մանկական սիրով:

Ամենից աւելի դժուար է բարութեան զգացմունքի զարգացման համար որ և է կանոն ստեղծելու: Միշտ և ամեն բանում հառակակիցներին բաժին հանելը պէտք է սկզբունք դարձնել: Սակայն այս դէպքում մօր կամ դաստիարակունու կողմից մեծ տակտ է հարկաւոր, որ երեխային սովորեցնեն ամեն բան հաւասար բաժանի և հասակակիցներին օկնի: Պրապէսպի բարութեան զգացմունքը ուրիշների մէջ զարգացնենք, պէտք է մենք ինքներս բարի լինենք, ուստի մանկան մէջ բարութեան զգացմունքի զարգացումը կախուած է նրա մասին հոգ տանող անձնաւորութիւնների յաջող ընտրութիւնից, որոնք պէտք է երեխային տան իրենց սիրտն ու հոգին, պէտք է լինեն անվերջ համբերող, որ նրա այս կամ այն հարցի առիթով յաճախակի դիմումների ժամանակ չըարեկանան նրա վրայ, յիշելով բանսաստեղծի ասածը, որ՝ «այս հասակը խղճահարուել չգիտէ»: Օգտակար է նոյնպէս երեխայական մորքին հասկանալի նկարներ ցոյց տալ, որոնք առաջացնեն բարի զգացմունքներ և արտայայտեն մարդկային հոգու լաւ կողմերը: Աշխատեցէք այս նկարները բացատրել մանկան հասկանալի լեզուով, ուշագրութիւն դարձնելով նկարի բոլոր լաւ գծերի վրայ և կհամոզուէք, թէ որպիսի հետաքրքրութեամբ նա կ'կլանի ձեր ասածները: Ապագայում մեծ նշանակութիւն ունի երեխայի վրայ դորեղ տպաւորութիւն թողնող համապատասխան մանկական հէքեաթների ընտրութիւնը և կարդալը:

Բնդհանըապէս անհրաժեշտ է կարելոյն չափ մանկան եսա-

կանութիւնը ճնշել, զարգացնելով նրա փոխարէն բարոյագիտական զգացմոնքների Այդ դէպքում ցանկալի է և նոյն իսկ անհրաժեշտ է, ճնարաւոր եղածին չափ շռւտ, կրթութիւնը լինի ոչ միայնակ, այլ հասակակիցների հետ:

Մանկան հսականութիւնը բաժանւում է երկու տեսակի՝ մէկը ըղիում է իւր կարիքներին բաւարարութիւն տալու ձգուումից, իսկ երկրորդը՝ ձեռք բերած նոր զիտելիքների վերագնահատումից և ցանկութիւնից՝ ինչպէս էլ լինի, նոցա կարերութեանը մասնակից անել և հասակաւորներին, վերջինս բնականաբար ժամանակի ընթացքում ինքն իրեն անհետանում է, մինչդեռ առաջինի ճնշումը և հետացումը դաստիարակների կողմից լուրջ ուշադրութիւն է պահանջում:

Երեխայի մէջ համեմատաբար աւելի շատ է զարգանում սեփականութեան զգացմունքը՝ այդ իրաւական հասկցողութիւնների սաղմբը՝ Կարիք չկայ լուցնելու այս միանգամայն բնական զգացմունքը, ասկայն պէտք է խուսափել, որ նա հսական ընոյթունեցող ձգտումների զարգանալու առիթ չլինի. Այս տեսակէտից շատ ցանկալի է, որ այն բոլորը՝ ինչ որ տրուում է երեխաներին, նոցա մէջ հաւասար բաժանուի, առանց մէկնումէկին առաւելութիւն տալու. Այս բանի ճետ մանուկները շուտ հն հաշտուում և այցպիսի բաժանելը նոցա մէջ պահպանում է մեկ համար ցանկալի արդարութեան զգացմունքը:

Յատկապես անհրաժեշտ է խուսափել երեխաների միմեանց հետ վիճելուց, որը առանց մէծերի հսկողութեան կարող է փոխւել տուր ու դմիոցի. Սրա առաջն առնելու առաջին միջացն է՝ վէճի դրդապատճառը՝ վերացնելը. իսկ եթէ այդ անհնար է, փոքրիկների ուշադրութիւնը պէտք է գրաւել մի որ եէ կողմանակի զրադմունքով կամ նոր իսազով:

Ինքնասահմանափակման վարժեցնելու ճետ անհրաժեշտ է երեխայի մէջ աստիճանաբար օրինակի և ճամապատասխան գործողութիւնները խրախուսելու միջոցով զարգացնել պարտքի զգացմունքը, բացատրենով երեխային իրեն գործողութիւնների ուրիշ համար օգտակարութեան նշանակութիւնը. Միւս բարոյական զգացմունքների ճետ յատկապէս անհրաժեշտ է երեխայի մէջ պատռաստել ճշմարտասիրութեան զգացմունքը. Երեխաների ստախօսութիւնը, ինչպէս յայտնի է, շատ տարածուած երևոյթ է. միթէ մօր կամ դաստիարակչունու կողմից յանցանը չէր լինի, որոնք գիտենալով ճանդերձ, որ սուտը մեծ պակասութիւններից մէկն է, նրա հանդէպ աշքները խփէին Առևտը երեխայի մէջ պահնուում է զլխաւորապէս նմանուելուց և դաստիարակութեան վատ տարածելուց և մանողութիւնը նիւթ է գտնում հասակաւոր-

Ների օրինակների, պատմուածքների և հէքեաթների ընթերցման մէջ, որտեղ ծածկուած է լինում սուտը և խարէութիւնը: Սրա համար միասին երբ երեխան նկատում է, որ անարդարութիւն գործելով երեխն անպատիժ է մնում, այն ժամանակ ամենավառ սուտն անդամ րուն է դնում նրա հոգում և ընդմիշտ ամրապնդում է:

Այդ պատճառով պահանջւում է խիստ ուշադրութիւն դէպի երեխայի իւրաքանչիւր սուտը, ճնշելով այն սկզբից, բայց որ աւելի կարեռ է, գաստիարակութիւնը պէտք է այնպէս տարուի, որ երեխայի մէջ ստի զարգանալու ոչ մի առիթ չլինի: Սրա համար հէնց սկզբից հասակաւորների դէպի մանուկն ունեցած վերաբերմունքի մէջ պէտք է լինի ուղղամատութիւն, արդարութիւն և երեխան այդ ձեր վերաբերմունքը ակամայից իւրացնում է ուրիշների հետ վարուելիս:

Ապա պէտք է բոլոր միջոցներով ձգտել երեխայի մէջ վասել սիրոյ կայժը դէպի մերձաւորը:

Այստեղ մեծ գեր կարող է կատարել հէքեաթների և պատմուածքների յաջող ընտրութիւնը, որոնց մէջ արտայայտում է բնական կերպով և արդարացի այս կամ այն երեխայի անբախտ վիճակը: Այդ հէքեաթների մէջ չպէտք է լինին ոչ կախարդներ, ոչ չար խորթ մայր, ոչ էլ ուրիշ վասակար և անպէտք մանրամասներ, որոնք մանկան երեակայութիւնը սարսափով լցնեն, այլ պէտք է որ պատմուածքի հերոսի վիճակին երեխան վերաբերուի անկեղծ խղճանարութեամբ, որպէսզի հէքեաթը նրա մէջ առաջացնի սիրոյ և խղճանարութեան յոյզ դէպի տանջուողը: Ոչինչ եթէ պատմուածքի ծանր տնկում երեխան կսկսի լալ, գոքալիզացիաթեան արցունքներ են, որոնք առաջանում են դէպի մերձաւորն ունեցած սիրուց: Ի հարկէ կարիք չկայ մանկան հոգին տանջանքների ենթարկելու, այլ այդպիսի դէպերում նրա համար պէտք է գտնել նաև միիթարութեան վիսուքեր: Երեխայի չափաւոր կերպով, նման վսիմ զգացմունքներով ապրելը նրա մէջ առաջացնում և զարգացնում է այն սօցիալական և բարոյագիտական զգացմունքները, որոնք այնպէս աղնուացնում են մարդու անձնաւորութիւնը:

Բացի սրանից երեխայի գաստիարակութեան հական տարը պէտք է լինի գեղարուեստական զգացմունքի զարգացումը, որը զիսաւորաբ կապուած է տեսողութեան և լսողութեան բմբռնող գործարանների գործունէութեան հետ: Գիշեցիկի զգացմունքը կարելոյն չափ շուտ պէտք է զարգացնել: Այս նպատակին հասնելու համար մանկանցը պէտք է զարդարել, թիուկինի ձեր, երեխային հասկանալի գեղեցիկ նկարներով: Այս ընտրութիւնը

կարելի է անել երեխայի հետ, նրան հասկանալի յարմար նկար ներ դիտելիս Բնոտանի կենդանիների, թռչունների, երեխաների և աղջկների գեղեցիկ նկարները, համապատասխան պայմաններում, երեխաների մէջ միշտ հետաքրքրութիւն են առաջացնում և հէնց այսպիսի նկարներով պէտք է զարդարել մանկանոցը:

Խաղալիքների ընտրութեան մէջ նոյնպէս պէտք է ուշադրութիւն դարձնել գեղեցիկութեան և որոշ չափով գեղարուեստականութեան վրայ, որպէսզի դրանց միջոցով մանկան մէջ պահպանուի և զարգանայ ձգտութիւն՝ դէպի գեղեցիկը և վսեմը: Այս տեսակէտից մեծ կարողութիւն է հարկաւոր խաղալիքների համապատասխան ընտրութիւն անելու համար, որոնցից, իմ կարծիքով, պէտք է հեռացուի այն ամենը ինչ որ ծիծառելի է, ինչ որ կարող է երեխային իր անդուրեկան կամ սարսափեցնող տեսքով վախիցնել և զՊուեցնել և ինքն ըստ ինքեան հասկանալի է, այն բոլորը ինչ որ դատապարտելի է բարոյադիտական, բարքերի մաքրութեան և հասարակական վայելչութեան տեսակէտից: Բնդիանը պապէս մանկանոցների նկարների և խաղալիքների ընտրութիւնը շատ խիստ պէտք է լինի, որովհետև դրանք պէտք է զարգացնեն երեխայի մէջ բարի ձգտութիւնը դէպի այն ամենը, ինչ որ գեղեցիկ է և լաւ Խաղալիքների մէջ լինում են այնպիսիները, որոնց երեխան առանձնապէս սիրում է և հէնց դրանք պէտքէ կազմեն նրա մանկանոցի զարդը: Այսպիսով հետզհետէ կազմում է մանկանոցի սարք ու կարգը, որով երեխան ինքն սկսում է հրճուել, իւր խաղալիքները դասաւորելով և կարգաւորելով:

Գեղարուեստական զգացմունքի գլխաւոր գործօններն են երգեցողութիւնը և երաժշաութիւնը: Երգի վրայ երեխաները շատ շուտ են սկսում ու շաղրութիւն դարձնել, լսում են և լսում են նրա առաջին ձայներից յետոյ, իսկ երբ քունը մօտենում է, նոքա հանդիսացնում են իրենց մօր կամ ծծմօր երգի աղղեցութեան տակ: Այս դէպքում երգեցողութիւնը հանդիսանում է գեղարուեստական զգացմունքի զարգացման առաջին դրդապատճառը: Ժամանակի ընթացքում երեխաները իրենք էլ սկսում են պարզ մանկական երգեր երգել, սկզբում չափելով բաժանում են բառերը, ապա և նրանց համապատասխան երաժշտական եղանակ են տալիս:

Այդ բոլորը պէտք է հնարաւորութեան սահմաններում պահպանել և զարգացնել մանկան մէջ. սրանց հետ միասին շատ հետաքրքիր և ցանկալի է կազմել ընդհանուր խաղեր երգի հետ միասին, օրինակ՝ փոքրիկ շուրջպար կամ նոյն իսկ պարեր, թէկուղ և սրանք լինէին հասարակ ձևով ոտքերի թըփ-թըփացնելը:

Գեղարուեստական զգացմունքի զարգացմանը մեծապէս նպաստում են երաժշտական գործիքները, սակայն այստեղ ևս պէտք է

համապատասխան ընտրութիւն անելու Մեր կարծիքով մանկական հասակին համապատասխան գործիքներից մէկը զբամօֆօնն է, ի հարկէ յաջող թիթեղների—եղանակների ընտրութեամբ։ Արա միշտով կարելի է նաև մանկական երգեր սովորեցնել։ Աւելի յետոյ շատ օգտակար է դաշնամուրը, յատկապէս, երբ նրան ընթացակառում է երգը։

Որպէսզի մանկան հոգու յոյզերի կրթութեան տեսութիւնը վերջացնենք, ասենք մի քանի խօսք նաև կրօնական կրթութեան ժամանու։ Դաստիարակութեան մէջ կրօնական սարրի ունեցած նշանակութիւնը ժխտել չի կարելի։ Սակայն երեխաներին չպէտք է վախեցնել աստուածային պատուհաններով կամ Աստծու ուզարկած կայծակներով։ Երբ երեխան սկսում է հասկանալ իւր անօդնականութիւնը, անհրաժեշտ է, որ նա կրօնական տեսութեան մէջ բարոյական յենարան գդայ, ընդունելով Աստծուն կամ հրեշտակին ինչպէս իրեն մշտական պահապան։ Կարեռը չէ թէ մանուկը Աստծու մասին՝ ինչպիսի մտապատկեր կունենայ, սակայն պահապան—Աստուած նրան հարկաւոր է, ինչպէս հարկաւոր է այն նաև ժամանակակից վայրենուն, որը կեհանքի պայմանների, բնութեան տարերքի և արհաւերքի հանդէպ գիտակցելով իւր անօդնականութիւնը, ստեղծում է իրեն համար պահպանող—Աստուած։

Լեզուի զարգացման հետ կարելի է երեխային սովորեցնել առաջին աղօթքը՝ հայր մերը, նախօրօք միաքն ու բովանդակութիւնը մատչելի դարձնելով և երեխային քնից առաջ աղօթքի վարժեցնել։ Մենք ճիշտ չենք համարում երեխային մանկական հասակում շատ աղօթքներ սովորեցնելու։ Հէնց կրօնական զգացմունքի զարգացման համար վասակար է երեխայի գլուխը բազմաթիւ անհասկանալի աղօթքներով լցնելու, Դրա համար բացի մէկերկու աղօթքից, որ ասում է երեխան քնից առաջ, իւր մանձակալի առաջ ծունկ չոքելով և ծեռները խաչած, կարելի է սովորեցնել ընտանիքի անդամների համար իւր բառերով աղօթք ասել։ Օրինակ՝ Աստուած, պահիր հայրիկիս, մայրիկիս և այլն։

## 9.

Գարով երեխայի մտաւոր կրթութեանը՝ առաջին հարցը, որը այս դէպքում առաջ է գալիս, այս է՝ պէտք է արդեօք հոգալ մանձական վաղաժամ մտաւոր կրթութեան մասին, թէ այդ աւելորդ է, անօգուտ է և գուցէ նոյն իսկ վասակար նրա ապագայ մտաւոր զարգացման համար։

Կարծում են, որ վաղաժամ զարգացումը ընդհանրապէս ցանքալի չէ։ նոքա որոնք այս կարծիքին են, այս դէպքում առաջ-

նորդւում են այն օրինակներով, երբ մտաւորապէս շուտ զարգացած երեխաները, որոնք մեծ ապագայ են խոստանում կամ այսպէս կոչուած վաղաժամ հանձարները, հետագայում բոլորովին չեն արդարացնում իրենց վրայ զրուած յոյսերը։ Սակայն այս գէպքում գործ ունենք միայն այլասեռուածների հետ, որոնք աչքի են ընկնում վաղաժամ մտաւոր զարգացումով, ապագայում կանգ են առնում և նոյն իսկ կորցնում են այն, ինչ որ առաջուց ձեռք էին բերել Ուրեմն այստեղ խօսքը կրթութեան մասին չէ, որովհետեւ կրթութեան միջացով հանձարներ չեն մշակուում, այլ առանձին անհատների մասին է, որոնց բնութիւնից արուած վաղաժամ մտաւոր զարգացումը, ժամանակի ընթացքում, փոխարինուում է մտաւոր ընդունակութիւնների կանգ առնելով։ Եւ այդպէս վերոյիշեալ դէպքերը մեր գրած հարցերի հետ ոչ մի յարաբերութիւն չունեն։

Հենց այսպիսի դէպքերը հաստատում են հասարակութիւնն մէջ բաւականին տարածուած այն համոզմունքը, որ երեխայի վաղաժամ մտաւոր զարգացումը անօգուտ է և գուցէ նոյն իսկ վնասակար:

Այս դէպքում ևս անտեղիութիւնը առաջանում է զարդացում և կրթութիւն հասկացողութիւնների բաւականաչափ պարզ միջնելուց։ Չի կարելի և նոյն իսկ վնասակար է, երբ շտապեցնում ենք մտաւոր զարգացման գործը, այսինքն՝ երեխային ծանրաւենում ենք նրան վաղաժամ մտաւոր հասունութիւն տուող տեղեկութիւններով, սակայն կրթել երեխայի հետաքրքրութիւնը, սէր դէպի ինտելիգենց աշխատանքը, կրթել նրա մէջ եռանդը, միենոյն ժամանակ սովորեցնելով զսպել եռականութիւնից առաջացած աւելորդ գործութիւնը, կրթել նրա մէջ լուրջ վերաբերերունք դէպի իրականութիւնը, հեռացնել այն ամենը ինչ որ աւելորդ է, երեխական է և վախեցնող, կրթել նրա մէջ հակումն դէպի մտաւոր ինքնուրայնութիւնը և այն—այս չի նշանակում ծանրաւենուել երեխայի ուղեղը այլ և այլ նրա հասակին անհամապատասխան անպէտք տեղեկութիւններով, այլ նախապատրաստել նրա մէջ գործնական տեսակէտից շատ օգտակար ունակութիւններ, որոնք երեխային ոչ միայն այդ հասակումն են մեծ ծառայութիւն մատուցանում, երբ կարիք կայ սկսելու դպրոցական կը թութիւնը, այլ և նրա ամբողջ կեանքը ընթացքում։

Առաջնորդուելով այս տեսակէտից մենք կողմնակից ենք երեխայի վաղաժամ կրթութեան, վերոյիշեալ իմաստով։ Մինչդեռ յիշած հասկացողութիւնների շփոթութիւնը այն տեղն է հասաւում, որ մի քանի մանկավարժներ նոյն իսկ հակառակ են երեխային խօսել սովորեցնելուն, տռարկելով, որ առաջ պէտք է հաշ-

սունանայ նրա միտքը, ապա պէտք է հետեւ նրա արտայայտութեան ձեր: Կարծես թէ միտքը կարող է կատարեալ լինել առանց խօսքի: Չէ՞ որ հէնց բառերը միտքը դարձնում են պարզ և ճիշտ, իսկ այս կրթութեան տեսակէտից շատ անհրաժեշտ է: Խորհուրդները, թէ պէտք է սպասել այն շրջանին, երբ երեխան տիրապետում է մտքին, ապա նրան խօսել սովորեցնել, նման է այն բանին, եթէ սկսէինք թուարանական և հանրահաշուական յարաբերութիւնները սովորել այն ժամանակ, երբ գեռ ևս մաթեմաթիկական հասկացողութիւնները չունեինք, որոնք ձեռք են բերուում հէնց այդ յարաբերութիւնների ուսումնասիրութեան համար:

Բոլոր բժիշկներին լաւ յայտնի է, որ երեխայի մտաւոր զարդացման համար խօսելու ընդունակութեան զարգացման ուշանալը շատ վնասակար է: Ճիշտ է, սովորականից ուշ խօսել սկսող երեխան կարող է հասնել աւելի շուտ խօսել սկսողին, սակայն այս նրա անհատականութեան հետևանքն է, այլ ոչ թէ փաստ է որ երեխային չպէտք է խօսել սովորեցնել մինչև այն հասակը, երբ նա ինքը կարող է այն սովորել: Մենք ենթադրում ենք, որ իւրաքանչիւր սովորոյթի որքան կարելի է շուտ ձեռք բերելը և յատկապէս խօսելու նման էական սովորոյթի, որը ճիշտ և կանոնաւոր մտածողութեան զէնքն է, երեխայի կանոնաւոր մտաւոր զարդացման համար, միշտ օգտակար է: Բանը նրանումն է, որ հէնց այս սովորոյթի զարգացումը, եթէ նա ձեռք է բերուում առանց յատուկ լարման և աստիճանաբար, օրինակ խաղի հետ միասին, երեխայի մէջ մի առանձին յոզնածութիւն չի կարող առաջացնել: Ձեռք բերուած սովորոյթը և յատկապէս խօսելունը, ոչ մի կերպ չի կարող ծանրաբեռնել երեխայի մտաւոր շրջանը, ընդհակառակը, կծառայի նրա հոգեկան գործունէութեան թեթևացման: Ինչպէս որ ֆիզիքական կանոնաւոր վարժութիւնը ամրացնում և զարգացնում է ֆիզիքական կողմը, նոյնպէս և հոգեկան շրջանը զարգանում է համապատասխան վարժութեան ժամանակ, մինչդեռ վարժութեան բացակայութիւնը առաջացնում է մտաւոր ուժերի թուլացումն և մտաւոր զարգացման յետամացութիւն:

Կրթութիւնը, ինչպէս և ամեն մի դիսցիպլին, պէտք է աշխատի գարգացնել սէր դէպի մտաւոր աշխատանքը, հեռացնելով մարդուն մտաւոր պարապութիւնից և ծուլութիւնից. սա իւր ձեւ հոգեկան մարզանք է, որը նպատակ ունի մանկան մէջ զարգացնել մտաւոր գործունէութեան սէր և կարիք և տանել նրան միշտ ցանկալի շաւղով: Մեր հասարակութեան մէջ համարեալ թէ ընդունուած է մտածել, որ մինչև 7—8 տարեկան, այսինքն՝ սովորական դպրոցական հասակը, երեխան կարող է չարութիւն անել, վաղել խաղալ և առհասարակ պարագ անցկացնել, մոռանալով

որ հէնց դրանում արմատանում է նրա մէջ հակումն դէպի մտաւոք պէսրապութիւնը նրա ամբողջ կեանքի ընթացքում։ Այս պատճառով մենք յանձնարարում ենք երեխային վաղ հասակից սկսած աստիճանաբար մտաւոր աշխատանքին վարժեցնել սակայն միշտ յարմարուելով նրան։ Թէկ մտաւոր զարգացումը սկսում է և կարող է շարունակուել խօսելու ընդունակութիւնից շատ առաջ, սակայն առանձնապէս աւելի սիստեմատիկ մտաւոր կրթութիւնը, բառի բուն նշանակութեամբ, կարելի է սկսել այն ժամանակուանից գլխաւորապէս, երբ երեխան սկսում է հասկանալ մեծերի խօսակցութիւնը։ Այդ պէտք է սկսուի հէնց երեխային խօսել սովորեցնելով։

Ինչ վերաբերում է երեխայի լեզուի զարգացման, այս տեսակէտից ի նկատի ունենալով, որ նրա ձեռք բերելը մանկան զարգացման գլխաւոր դէնքերից մէկն է, ուստի պէտք է բոլոր միջոցներով աշխատել, որ երեխայի լեզուն զարգանայ որքան կարելի է շուրջ և կանոնաւոր Ցոյց տուած նպատակին համելու համար անհրաժեշտ է սկզբից խօսել երեխայի հետ արտասանելով նրա մօտ հասարակ բառեր՝ մայրիկ, հայրիկ, յետոյ զանազան առարկաների անուններ տալ, որոնք պատահում են մանկան կեանքում։ Ոչինչ եթէ երեխան չի կարողանում նոյն իսկ նմանուելով կրկնել բառերը, նա յամենայն դէպս իւրացնում է նրանց նշանակութիւնը և այդպիսով հետզհետէ սկսում է հասկանալ հասակառների խօսակցութիւնը։

#### Կը շարունակուի

